

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈՒՑ ԾՇԱԿԱՆ. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ՅԱՂԹԵՐԳՈՒԹԻՒՆ ԿԱՍ ԲԱՅ ՆԱՄԱԿ  
ԱՇԽԱՐՀԻՆ

## Մարինե Ղազարեան

*«1915 բուսականից սկսած, ամեն տարի այդ օրը լուսինը եաթաղանի նման կտրում է զարնան կոկորդը հայոց լեռնաշխարհի գլխին կախուած պատմութեան երկնքում»:*

*Արեւշատ Ասագեան*

Արեւմտահայութեան՝ «սովի ու սուրի մղձաւանջային» տարիները պատկերող գրականութեան համապատկերում իր ուրոյն տեղն ունի Յ. Օշականի «Կայսերական յաղբերգութիւն» շարքը<sup>1</sup>, որում որոշակիանում է ոչ միայն Օշական գրողի, այլև քաղաքագետի դիմագիծը: Շարքն ունի առաջաբան, որտեղ ժողովրդի քաղաքական հարցերին անդրադարձող գրողը գնահատում է պատմական երեւոյթները, 20-րդ դարակերպի աշխարհաքաղաքական այն իրավիճակը, որի գոհը դարձաւ հայ ժողովրդի մի զգալի հատուածը: Օշականը այն համոզմունքն է յայտնում, որ շոնդալից յաղբանակներն ու փառքը մեծ տէրութիւնները ձեռք են բերել այլ ազգերի արեան և կորուստների գնով: Իսկ հայերի եղեռնի հարցերին անդրադառնալիս իր քննադատութիւնը և նախատիքը ուղղում է գերմանացի կայսր Վիլհելմ Բ-ին<sup>2</sup>, ում կայսերական ծիրանին վարագուրեց «մէկը այն աննախընթաց նախճիրներէն, որոնցմով աղտոտած ըլլայ երբեք մարդերուն պատմութիւնը»<sup>3</sup>: Ահա թէ ինչու շարքի առաջաբանը կայսերն ուղղուած բողոք-նամակ կարող ենք համարել: Բայց, խորամուխ լինելով առաջաբանում արժարձը ամ խնդիրների մէջ, կարող ենք եզրակացնել, որ Օշականի քննադատութիւնն աւելի շատ ուղղուած է մեծ տէրութիւնների անտարբերութեան դէմ, որոնց աչքի առջեւ ու թողոտութեամբ քաղաքակիրթ յորջորջուած դարում ոչնչացում էին ժողովուրդներ:

Թուրքերի վայրագ գործողութիւնների զուգահեռները կարելի է տեսնել նաեւ այլ ժողովուրդների պատմութեան մէջ: Սակայն Օշականը նշում է, որ հայերի եղեռնը մարդկային պատմութեան այն էջերից է, «Ինչ որ

մարդերը չտեսան իրենց պատմութեան բոլոր գեղեցնեքու ատենն անգամ» (էջ 9): Հեղինակը պատկերում է եղեռնը՝ ոչ մի անգամ ոճրագործի ազգութիւնը չնշելով: Փոխարէնը առկայ են «գիշակեր», «արիւնի ծարաւ գազան» և այլ մակդիրներ: Միակ բանը, որ պարզում է ոճրագործների ազգութիւնը, նրանց դրօշի նկարագրութիւնն է. «մեծ դրօշակ մը վէտ-վէտուն, իրենց ետին, կարմիր, աստղէ աչքով մը, որուն վրայ ճիւղօրէն սպիտակ յօնք մը կը կորանայ» (էջ 72): Շատ հատուածներում չկայ նաեւ «մեր ցեղը» արտայայտութիւնը, որը յուշէր հայերի կոտորածի մասին<sup>4</sup>: Բացակայում են նաեւ տեղանունները, փոխարէնը՝ վերի գիւղ, վարի գիւղ, պզտիկ լեռ, դարաւոր աղբիւր և այլն: Այսինքն՝ տեղանունների և ազգութիւնները զանազանող անունների բացակայութիւնը վկայութիւնն է այն բանի, որ գրողի ցարը ծնունդ է ոչ միայն իր ազգի տառապանքներից, այլև առհասարակ ոչնչացուող ժողովուրդների տառապանքից, համամարդկային ցաւից, և նրա մտորումների կենտրոնը դարձել է մորթուող մարդը<sup>5</sup>, իսկ թուրքը միջանկեալ օղակ նրա և «քաղաքակիրթ» աշխարհի միջեւ:

«Կայսերական յաղբերգութիւն» վերնագիրը ծաղրական-քննադատական ուղղուածութիւն ունի: Ի՞նչ յաղբերգութեան, ի՞նչ յաղբարշաւի մասին է խօսքը, և ի՞նչ էր թողել այն իր ետեւում: Օշականը արտաքին մեղաւորների շարքում, յանձին Վիլհելմի, շեշտում է հօր Գերմանիայի դերը. «Կիսաստուածը այդ օրերուն աշխարհին ճակատագիրն ունէր իր մականին տակ» (էջ 9): Բայց փառքն ու դափնիներն անցողիկ են, ինչպէս անցողիկ է կեանքում ամեն բան: Նրանց ետեւում մնում է պատմութիւնը և մի ամբողջ ազգի նախատիքն ու արգահատանքը:

Օշականը առաջ է քաշում մի նուրբ հարց եւս: Մեծ տէրութիւնների պետական գործիչների զարթոյական քաղաքականութիւնը նրա համար պարզ էր, բայց այն, թէ մի ամբողջ ժողովրդի գողգորային ինչպիսի անտարբերութեամբ է նայում զարթոյ երկրների հասարակ ժողովուրդը, գրողի համար մնում է անհասկանալի: Անհասկանալի է նաև այն, որ նման անտարբերութիւն դրսեւորում է քրիստոնէայ և քաղաքակիրթ համարուող ժողովուրդը: Ճիշտ է, Վիլհելմի կառավարումը նշանաւորում է Գերմանիայի հօրացմամբ, ժողովուրդը մեծարում և փառաբանում է նրան,

բայց, աւա՞ղ, մոռանում է մերժել և դատապարտել ոճրագործութիւնը: Օշականը գիտէ, որ պետական գործիչները ծնունդ են հենց նոյն ժողովրդից, ուրեմն զաւթող առաջնորդների ժողովուրդը պետք է փառաբանի նրանց: Սա Օշականի ամենացատու վերքն է, և որքան ցատու է սորմորում այն, այնքան աւելի անխնայ է դառնում նրա գրիչը: Եւ եղերեգուն դիմում է անէժքի փիլիսոփայութեանը. «Ու մեր եղերքը նորէն քեզի կու գայ, քու վրայէդ իջնալու համար քու ցեղիդ, որ հանդուրժեց - չըսելու համար փառաբանեց - ոճիրներուն ամենէն անորակելին» (էջ 9):

«Կայսերական յարքերգութիւնը» առաջին տպաւորութեամբ միայն կարող է թուալ սոսկ նկարագրութիւնների, անձնական ապրումների, յոյզերի ու խոհերի համապատկեր: Տողերի արանքում, սակայն, նկատելի են Օշականի քաղաքական վերլուծութիւններն ու դատողութիւնները: Օշականը հայոց եղեռնը դիտարկում է որպէս նահատակ ժողովրդի շարունակ կրկնուող արիւնալի պատմութեան դրուագներից մէկը: Ու երբ փորձում գտնել կոտորածների, գրկանքների և կորուստների պատճառը այն երկրի, որ «դարերու ընթացքին, օր մը անգամ չէ սաւառնած մարդ մորթելու հրէշային երգը» (էջ 25), բայց «ուրկէ դարէ դար, երբեմն տարիէ տարի կրակի ու արիւնի թաքառը կ'անցնի» (էջ 26), ի վերջոյ եզրակացնում է. «Մեր ցեղը չի հեզներ: Չի կրնար ատել: Իր պատմութեան մէջ ան ամենէն աւելի մեղքած է» (էջ 10): Առաջաբանում հայի հոգեկերտուածքը բնութագրող արտայայտութիւնները մասնակիանում են պատուածքներում. եղեռնական պատկերները զուգորդում են հարցադրում-դատողութիւններով: Ակնառու է, որ շարքի բոլոր պատմուածքները կապուած են միմեանց ոչ միայն նիւթի տրամաբանութեամբ, այլեւ հայ մարդու յատկանիշների բնութագրումների շարունակութեամբ:

«Ինչո՞ւ են մեզ կոտորում» հարցը տարբեր պատմուածքներում <sup>6</sup> ստանում է իր պատասխանը: Արդարութեան որոնման ճանապարհին գրողը երբեմն չարանում է աշխարհի ու իր ազգի վրայ, և այդ չարութեան արտայայտութիւնն են դառնում երբեմն ծայրայեղացուած տեսակետներ, ինչպէս օրինակ՝ մենք ծնուել ենք «Երկրի մը մէջ, ուր այդքան անվրդով երազելու համար մարդիկ արծի ծնելու չափ խելացի չէին եղած» (էջ 15): Գրողը հայ ժողովրդի պատմութիւնը գնահատելիս

հանդէս է գալիս սրափ քննադատութեամբ: Նա պատճառները որոնում է ո'չ միայն արտաքին թշնամու քաղաքականութեան մէջ, այլեւ վրիպումներ և բացթողումներ է մատնանշում ազգային կեանքում: Պատկերելով հայ գիղացիների ձեռքակալութեան մի դրուագ՝ նա գրում է. «Մէկիկ-մէկիկ դուրս կանչեցին զարմացած գեղջուկները, որոնք առանց շքութեան շարժելու, թողուցին որ գոյգ-գոյգի կապեն իրենց ձեռքերը իրենց իսկ տունին չուաններովը» (էջ 20)՝ փոխանակ ընդդիմանալու և ըմբոստանալու: Օշականի համար գիղացիներից իւրաքանչիւրն ունի մեղքի իր բաժինը:

Օշականի որոնումները ի վերջոյ տանում են դէպի քրիստոնէութիւն-մահմետականութիւն հակադրութիւնը, որը, կարելի է ասել նոյն հայ-թուրք հակադրութիւնն է, որի հիմքը ըստ Օշականի, այս երկու ազգերի արժեհամակարգերի մեծ տարբերութիւնն է: Գրականագետ Կ. Աղաբէկեանը կարծում է, որ հայերի և թուրքերի տարբերութիւնը չի պայմանաւորում միայն հաւատով. «Հաւատի գործօնի մշուշից բարձրանում է թալանի, կանանց ու աղջիկներին տիրանալու, հարեւանների բարեկեցութիւնն աւերակելու անսահման տենչն ու անապատային բնագոյր»<sup>7</sup>: Լ. Սէյրանեանը նկատում է. «Հայ-թուրք առնչութեան հարցը, որ գալիս է ամբողջացնելու Օշականի կողմից հայ հոգեմոյնքի շնորհների ու հակաշնորհների զուգահեռ քննութեան փորձը, Հայ հոգու օշականեան որոնման-քննաբանման կարեւոր հատոյթներից է»<sup>8</sup>: Անա գեղարուեստական մի պատկեր «Վրդովուած խղճմտանքը» պատմելու միջոցով. մահմետական ձեռունին իր աստծուն զոհ է մատուցում քրիստոնէաներին՝ նրանց էլ ծաղրելով, թէ ինչու նրանց չի օգնում իրենց աստուածը, որի սիրոյն համար պատրաստ են մորթուելու: Եւ որպէս իրենց հաւատքի ճշմարտացիութեան և քրիստոնէութեան անարդարացիութեան ընդունում, «մորթուելիք գոյգը պարտաւորուած էր բաց պահելու իր աչքերը, ապրելու համար իր ամբողջ ամօքը, որ կը բարձրանար այդ դիակոյտէն, լսելու համար վերջին անգամ նախատիքը, որ կը զարնէր իրենց հաւատքը ու իրենց անկարող աստուածը» (էջ 26): Բայց մորթուող ձեռունին պատվիրում է մորթուող տղային արտասանելու «Հայր մերը»՝ հոգիին մէջէն անհուն խոյանքով մը բարձրանալով դէպի այն Աստուածը, որուն վատութիւնը ամէն նախնիքէ ետք, մոռցած էր ցեղը, ու քաղցրօրէն համակերպած՝ նորէն՝

անոր սիրոյն մորթուելու» (էջ 24): Սրանով Օշականը ամենեւին նպատակ չունի մատնանշելու, քէ քրիստոնէութիւնը գրկում է մարդուն պայքարելու ճիգերից, ըմբոստանալու համարձակութիւնից: Սա նոյն գոհաբերութիւնն է, որ կատարեց Քրիստոսը յանուն մարդկութեան: Սա է հենց այն ամենատականը, որով քրիստոնէութիւնը առանձնանում է մահմեդականութիւնից: Մենք էլ գոհաբերութեան խորհուրդը մեր մէջ պահպանող, բարձր բանականութեամբ օժտուած հայ քրիստոնեաներ ենք և քրիստոնէութեամբ քարոզող հեգուրիւնն էլ հայ ազգը կրում է հպարտօրէն: «Քիչ ետքը, անտառի վերի ծայրէն, ու խուլ քալումաճքով մը, երեւան կ'ելլար կարաւանը, երկար շղթայ մը մարդերու, համաշափօրէն իրարու կապուած, որ կը քալէր անձայն, գլուխները զինուորական շեշտումաճքով (ընդգծումն իմն է-Մ. Ղ.) մը դէպի առաջ, առանց աջ ու ձախ շեղումի» (էջ 14): Սա կոտորուող ժողովրդի հոգեւոր երբ է: «Հպարտ հեգուրիւն» *օքսիմորոնը* (նրբաբանութիւն) հասու է միայն հայ քրիստոնեային, և սրանով գրողը ակնարկում է հայ ազգի հոգեւոր հարստութեան տէր լինելը՝ ի տարբերութիւն արեան և նիւթականի ծարաւ մահմետականի:

Հայ-թուրք հակադրութեան խնդիրը հետագայում Օշականը առաջ քաշեց նաև իր վէպերում՝ թուրքի նկարագրի մասին պահպանելով տարիներ առաջ ունեցած իր տեսակէտը: «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» ուսումնասիրութեան մէջ, անդրադառնալով իր իսկ վէպերի քննութեանը, գրում է. «Բայց պարտաւոր եմ աւելցնել, որ այդ ամենէն պատուական մարդը (թուրքը - Մ.Ղ.) պիտի ծնրադրէ իր նամազը ընելու, դանակը խսիրին երկարած, աղօթէ խորունկ գոհունակութեամբ մը ու պիտի ելլէ ոտքի, քիչ անդին կապուած տղեկ մը մորթելու, երբ իրեն ըստի, որ հայրենիքը այսպէս կ'ուզէ»<sup>9</sup>: Ըստ Օշականի՝ այստեղ է դրսևորում հայի և խիղճ կոշումից զուրկ թուրք անասունի մեծագոյն տարբերութիւնը, ում խորք է ապաշխարելու տառապանքը, ով ընդունակ է առանց ցաւի զգացման կատարելու միայն իր առջեւ դրուած պարտականութիւնը:

Պաշտօնեաների մի քանի նկարագրութիւններ, որով պարզորոշ երեւում են իրենց շուրջը մահ ու սարսափ տարածող թուրք ոստիկանները և մարդկանց վերաբերմունքը նրանց նկատմամբ: Թուում է՝ արտառոց ոչինչ

չկայ զինուորականների հագուկապի մէջ, հագուստ՝ որը բնորոշ է այս կամ այն ժամանակներում ապրող զինուորականին: Բայց Օշականն իր բնութագրումներն աւարտում է նրանց դաժան էութիւնն ընդգծող մեկնաբանութիւններով, ինչպէս օրինակ «դեղին մատները մահուան դարանի մը նման կը փռուէին, սպառնազին ու ցուրտ շողիւնով մը անջատելով գորշ կերպասի մը մոխիրէն» (էջ 45), կամ «գլուխնին այլապէս ահաւոր արուեստով մը փաթուորած» (էջ 45), «արիւնի պէս աչք առնող գօտի մը կը կերտէր անոնց խորխտ մէջքը» (էջ 45): Հեղինակը նմանատիպ բոլոր առաջնորդներին համարում է չգիտես քէ որ դարում դժոխքից վնդդուած իին աստուածներ, որոնց կուռքը անպաշտպան կանանց ու երեխաների արեամբ լցում բաժակն է լոկ: Դարեր առաջ ասպետների հպարտութեան առարկայ համարող սուրը այժմ անցել է «քաղաքակրթուած» վայրենիների ձեռքը, ովքեր ընդունակ են իրենց գօրութիւնը փորձելու միայն «հաւէ մը աւելի անպաշտպան ու ծուկէն աւելի մերկ մարմիններուն վրան» (էջ 47): Օշականի ծաղրի ու պարսաւանքի խտացումը դառնում է հետեւեալ արտայայտութիւնը. «Փա՛ռք այն ցեղին, որուն մայրերը այս տեսակ աստուածներ պահեցին իրենց արգանդին խորը» (էջ 46):

Օշականի եղեռնապատումի առանձնախտկութիւններից մէկն այն է, որ նա պատկերում է ոչ միայն թուրքերի վայրագ գործողութիւնները և դրանց հետեւանքները, այլև տալիս է եղեռնական իրադարձութիւնների նախապատմութիւնը: «Կայսերական յաղթագութիւն» շարքում հայերի եղեռնը դիտում է որպէս վաղուց ծրագրուած, «ոճրագործ եւ ինքզինքը հեռատես դաւանող քաղաքականութիւն», ինչը վկայում են պատմական և գեղարուեստական այլ աղբիւրներ եւս: Այդ քաղաքականութեան հետեւանքով հայերը ստիպուած եղան թուրքերի հետ երկար տարիներ միասին ապրելու, հանդերում ու արտերում աշխատելու: Ու երբ հասաւ իրենց ծրագիրն իրագործելու ժամանակը, նրանց ծանօթ էին բոլոր տները, նոյնիսկ բնակիչների անուններն ու մականունները: Պատմութեանը յայտնի է Իթքիհատի կենտկոմի գաղտնի նիստի գլխաւոր գեկուցողի, կոմիտէի քարտուղար Նազըմի կոչը, «Պէտք է հայ ազգը արմատախիլ ըլլայ, մեր հողին վրայ անհատ մը իսկ չմնայ, հայ անունը մոռցուի: Հիմա պատերազմի մէջ ենք, ասկէ յարմար առիթ չի

գտնուիր, մեծ պետութեանց միջամտութիւնը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլալու պարագային խնդիրը կատարուած իրողութիւն մը կը դառնայ և կը փակուի, այս անգամուան գործողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի ըլլայ, հայերէն անհատ մը իսկ չմնալու պայմանաւ բնաջնջումը անհրաժեշտ է»<sup>10</sup> :

Թուրքերի եկուոր լինելու փաստը գեղարւեստականացնելու նպատակով Օշականը «Վրդովուած խղճմտանքը» պատմուածքում պատկերում է դարաւոր մի գիւղ՝ իր դարաւոր աղբիւրով, որը ստիպուած եղաւ ծառայելու եկուորներին, ինչպէս ինքն է բնորոշում «նոր մարդերուն», որոնց հոգում ապրում էր արեան ծարաւ գազանը: Օշականը խոր ցաւով է պատկերում թուրք միջավայրի ազդեցութեամբ պայմանաւորուած ազգային արժէքների կորուստը, պղծուած սրբութիւնները և տագնապում հայի հոգեւոր հաւանական պարտութեան համար: Այս երեւոյթը դառնում է Օշականի եղեռնապատումի կարեւորագոյն հարցերից մէկը: Առաջ է քաշուած մի էական խնդիր եւս. տափաստանից դէպի քաղաքակրթութիւն քայլող թուրքը դարերի ընթացքում մնացել է նոյնը: Ժամանակի հետ փոխուել է միայն հագուկապը, բայց վայրագ էութիւնը չի փոխուել. «Ու կիսաբաց կառքի մը մէջ, բարձր աթոռի մը վրայ բազմած էր նոր օրերու իշխան մը: Անոր գլուխէն կը վազէր կիսագլան ու կարմիր այն կերպասը, որ այնքան ոճիրներ զգեստաւորեց, տաղաւարեց եւ դեռ կը պտըտի Աստուծոյ յոյսին տակ: Անոր վիզը դիրտութեամբ կը տանէր ժամանակակից քաղաքակրթութեան յայտարար նշանակը, մաքուր ու ճերմակ օձիքը» (էջ 46):

Շարքի գրեթէ բոլոր գործերում Օշականը առաւելապէս հանդէս է գալիս որպէս վաւերագրող: Սակայն շարքում առանձնանում է մի պատմուածք՝ «Տանտան»ը, որը կարող ենք համարել եղեռն ապրած որբերի կեանքի ընդհանրացուած արտայայտութիւն: Օշականը համաժողովրդական ողբերգութեան հետեւանքով որբացած մանուկների բեկուած ճակատագիրը խտացնում է այս պատմուածքի հերոսի մէջ: Պատմուածքում երեսուն է մարդկային հոգին զննող հոգեբան-գրողը, ով որբի ներաշխարհը բացայայտելուն զուգահեռ ներկայացնում է առհասարակ գիղացի մանկան հոգեբանութիւնը, հետաքրքրու-

թիւնները, վախերն ու ցանկութիւնները: Այստեղ նկատում է տեղանքի նկարագրութեան միջոցով հրաշքով փրկուած որբի ներաշխարհը բացայայտելու Օշականի ձգտումը: Տուն ու հայրենիք կորցրած, եղեռնի ու տեղահանութեան սարսափներն ապրած որբերը ողջ կեանքն ապրեցին բախմաւի յուշերի ծանրութեան տակ. «Անոնք կ'ապրին իրենց մեռելները ու կը խաղան այն ընկերներուն հետ, որոնք չորցող ծաղիկներու պէս քափեցան երկար ճանապարհին վրայ» (էջ 36): Որբերը խոր դրամա են ապրում՝ յայտնուելով հին և նորի հակադրութեան մէջ՝ անընդհատ համադրելով կորցրածը և ձեռք բերածը. ջրառատ աւազանի փոխարէն՝ ցամաքած աւազան, սիրելի տիկնիկի փոխարէն՝ մէջքն ու բեր կոտորած տիկնիկ, կանաչ պարտէզի փոխարէն՝ չորացած ճյուղեր, դայալոյ բոշուններու փոխարէն՝ միայն ազոռներ, շէն տան փոխարէն, ամայի տուն: Վայրեր և երեւոյթներ, որոնք նրանց հոգում արթնացնում են հայրենի տան քաղցր յիշատակները, կուտակում նրանց արեան մէջ ապրող տանջող կարօտ և սէր:

Եղեռնապատումի հայ գրականութեան մէջ առաջին անգամ (գուցէ և միակ) Օշականն է անդրադարձել թուրք կանանց կերպարին՝ ոչ պակաս դաժան ու անտարբեր, ինչպէս իրենց ամուսինները: Կանայք կողոպտուած էին դիակներն այնպիսի յափշտակութեամբ, որ հեռանում էին՝ իրենց մանկամարդ երեխաներին դիակների մէջ թողնելով: «Ու թշուկները շատ ալ չէին վախնար սեւազգեստ կիներէն, որոնք կոկոզած՝ մեռելներուն վրայ, հայիոյելով կը կողոպտէին մորթուածները» (էջ 50)՝ ամուսիններից վերցրած կացիներով գլխատելով տակաւին կենդանի մարդկանց: Կանանց սարսափելի վարքը, անսիրտ ու անհոգի էութիւնը բացայայտելու համար հեղինակը նշում է նրանց՝ դիակները կողոպտելու համար մի քանի անգամ գնալ և վերադառնալը: Նրանց է հակադրում հոգատար հայ մայրերին՝ սրտում ուրիշի երեխայի նկատմամբ անսահման սէր և կարեկցանք, որ պայմանաւորուած է հայ կնոջ հոգեբանական առանձնայատկութեամբ:

Օշականը չի սահմանափակուած միայն թուրք կանանց և տղամարդկանց կերպարակերտմամբ: Այդ ցեղի՝ արեան ու թալանի ծարաւ հոգին բացայայտելու համար կարճ և դիպուկ բնութագրումներով կերտում է նրանց երեխաների՝ վայրենացած գազանաղէն մա-

նուկների և նախամարդու գործիքներով զինուած թուրք պատանիների կերպարներ, որոնց հայացքում նկատելի է իրենց հայրերի սառնասիրտ կատաղութիւնը:

Մի շարք գործերում առկայ են նատուրալիստական նկարագրութիւններ. «եղան դիակներ, որոնց ճեղքուած արգանդէն աղիքներ՝ դաւաճան օդակումով մը փախչող ոտքերուն շղթա՛յ նետեցին ու սողոսկուն օձերուն նման գետին փռեցին անոնց վերջին բռիչքը» (էջ 51): Սա բնութիւն է հակասում է գեղարուեստի օրէնքներին, և Օշականը չափազանցել է դրանք, սակայն այդպիսի պատկերների հանդիպում ենք նաև այլ հեղինակների երկերում և պատմական աղբիւրներում:

Հայերի նկատմամբ իրագործուած եղեռնը վեր է մարդկային բանականութիւնից, սա է փաստում սպանդին ակնատես ծերունիների խելագարութեան դրուագը: Բայց որքան էլ պատմուածքներում գերիշխող են եղեռնի սարսուղազու տեսարանները՝ հրդեհուած տների ու արտերի պատկերումը, ծերերի ու մանուկների կոտորածը, կանանց ու աղջիկների բռնաբարութիւնը, մանուկների թրքացումը, Օշականը նպատակ չունի գեղարուեստականացնել հայերի խեղճութիւնը. գրողը դիմում է վրէժի փիլիսոփայութեանը: Ասուածի լաւագույն օրինակը «Վրէժը» պատմուածքն է: Ծակատին կացնի հարուած ստացած և սպանդից մազապործ տղան լուծում է ցեղի վրէժը. «Եւ առանց գիտնալու, թէ ինչ կ'ընէ, իր թուլցած մատները մխեց անոր (թուրք երէխայի-Մ. Ղ.) բաց պուկէն ներս, ներս, միշտ աւելի ներս, փրցնելու համար անոր սիրտէն անիծուած այդ հագագը, որ ոճիքին համար հանդերձուած պիտի մնար» (էջ 52): Այսինքն եթէ անգէն ժողովրդի առջեւ զինուած մարդակեր գազան է կանգնած, և նրանից ծնուածը անկասկած մարդակեր էր լինելու, ուրեմն՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման: Վրէժի և հատուցման հարցը՝ «Յեղը կը լուծէ՞ր իր վրէժը», ստանում է իր պատասխանը՝ ցեղը պիտի լուծէր իր արդար վրէժը, որից յետոյ միայն կարող էր «Նոր կորովով, ճեղքուած ճակատով, բայց թեթեւցած սիրտով» (էջ 52) գնալ ճակատագրին ընդառայ:

Եղեռնը մարդու կողմից բնութեան ներդաշնակութեան խախտում է, որեւէ ազգի բնականոն զարգացման ընթացքի ընդհատում: Խախտուել էր անգամ գիշատիչ և ընտանի կենդանիների ապրելու և սնուելու սահմանը:

Գիշատիչները, որոնք ապրելու համար ճիգ պէտք է գործադրէին, անասելի ծուլութեամբ բզկտում էին դիակները՝ անտարբեր իրենց իսկ կողքին արածող գառների նկատմամբ. «Գայլք եւ գառինք ի միասին ճարակեցին...» (Մարգարէ): Գեղարուեստական այս պատկերը ունի խորհրդանշական իմաստ. մի ազգը դարձել է միասին յօշոտող գայլերի վոհմակ: Եվ Թումանեանի յայտնի քառեակի հետեւեալ միտքը, թէ «մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպէս կը մնայ», այլ ձեւի մէջ ներկայացնում է նաև Օշականը. «Բայց գայլք՞ըր: Անոնք չէին պակասած լեռներէն ներս ու իջած էին վար գայլի պէս, բզկտելու, դարձեալ դարերով (ընդգծումն իմն է - Մ. Ղ.)» (էջ 54): Արձանագրելով մարդկային պատմութեան մէջ անասականի գերակայութիւնը՝ Օշականը փաստում է, որ տափաստանից եկող թուրքը շատ հեռու է քաղաքակրթութիւնից. «Փա՛ռք այն քաղաքակրթութեան, որուն հեղինակութիւնը մարդերէն վեր կը բարձրանար, տարածուելու համար գազաններուն վայրագութեանը վրայ, ու կը փոխէր, կը սրբագրէր բնագոյները գիշակերներուն ամենէն խորխտներէն մէկուն» (էջ 14):

Օշականը, այնուամենայնիւ, հաւատում է արդարութեան յաղթանակին, քանզի «ոճիքներուն ամենէն անորակելին» չի կարող անպատիժ մնալ: Իսկ արդարութեան վերականգնման հիմքում Օշականը տեսնում է իր հայրենիքի ազատագրումը, փայտիայում «անմահ Երագի» իրականացման յոյսը և իր գործերով դառնում այդ Յոյսի և Երագի իրականացման համար պայքարող զինուոր:

Օշականի փոքր արձակի այս էջերը վկայութիւններ են՝ պատմուած «վաւերական վկաներու բերանով»<sup>11</sup>, մեծ գրողի և նրա բախտակիցների կեանքի պատկերը, այդ ժամանակաշրջանի հայելին: «Կայսերական յաղթերգութիւն»ով Օշականը դարձաւ հայոց եղեռնապատումի գրականութեան սկզբնաւորողներից մէկը: Որքան էլ գրողի խոհերն ու մտածումները խառնիխտուն են՝ միջնորդաւորուած անհարկի յիշողութիւններով, պատմուածքներում չկան գեղարուեստական լիարժէք կերպարներ, այնուամենայնիւ Օշականի եղեռնապատումը առանձնապատուկ և տպաւորիչ է իր գեղարուեստական լուծումներով, հռետորական հարցադրումներով, խորհելու և դասեր քաղելու պատմափիլիսոփայութեամբ, «հայ ցեղին հոգեյատակը» կազմող սահմանների

քննութեամբ:

«Կայսերական յաղթերգութիւնը» ոչ միայն Օշականի, այլև ողջ հայութեան բողոքն է կատարուած ոճրագործութիւնների նկատմամբ անտարբեր կեցուածք ընդունած աշխարհի դէմ:

Մ. Ղ.

Երեւանի Պետական Համալսարանի Հայ քանասիրութեան ֆակուլտետ  
Հայ նորագոյն գրականութեան ամբիոնի աւագ գիտաշխատող:

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- 1.- «Կայսերական յաղթերգութիւն» շարքում տեղ գտած երկերը տպագրուել են 1920թ. Պոլսում լոյս տեսնող «Ճակատամարտ» օրաթերթի տարբեր համարներում: 1922թ. Պոլսում լոյս տեսած «Ճորհուրդներու մեհեանը» գրքի վերջին էջում (128) Օշականը գրում է, թէ «Կայսերական յաղթերգութիւնը» մէկ այլ հատորում շուտով լոյս կը տեսնի: Իսկ թէ ինչ պատճառներով այդ հատորը լոյս չի տեսել, պարզ չէ: Պարզ չէ նաև այն, թէ գրքում գետնեղուած վեց պատմուածքից գատ Օշականը ուրիշ ինչ պատմուածքներ է ծրագրել ներառել: Հետագայում գրողի ծննդեան 100-ամեակի առիթով այդ գործերը մեկտեղուել են Բէյրութում լոյս տեսած համանուն ժողովածուում:
- 2.- Նա մեծ դեր է խաղացել Հայկական հարցում՝ իր հակահայ քաղաքականութեամբ սատարելով Սուրբան Աբդուլ Համիդին:
- 3.- Յակոբ Օշական, «Կայսերական յաղթերգութիւն», Պէյրութ, 1983, էջ 9: (Այս հրատարակութիւնից քաղուած միւս մէջբերումների էջերը կը նշուեն տեղում):
- 4.- Միայն «Տանտան» պատմուածքում է նշուում «ժայ» բառը և Պոլիս քաղաքի անունը:
- 5.- Ոչնչացուող ժողովուրդների խնդիրն Օշականը անդրադարձել է նաև «Ճորհուրդներու մեհեանը» ժողովածուում:
- 6.- Օշականի ինքնատիպ ոճի արտայայտութիւններից է նաև միևնույն ստեղծագործութեան մէջ տարբեր ժանրերի տարրերի համադրումը: Մեր խնդիրն է ներկայացնել գրողի եղեռնապատումի առանձնատկութիւնները, ուստի շարքի ժանրային խնդիրներին չենք անդրադարձել:
- 7.- Կիմ Աղաբեկեան, Յակոբ Օշական, Երևան, 2006, էջ 90:
- 8.- Լ. Սեյրանեան, «Ճոնարիում դէպի հոգու երկինքը», «Յակոբ Օշական» գիտաժողովի նիւթեր, Երևան, 2011, էջ 167:
- 9.- Յ. Օշական, «Համապատկեր արեւմտահայ գրականութեան», Անթիլիաս, 1982, էջ 139:
- 10.- Մեջբերումը միջնորդատրուած է. տես Վ. Գարբիլեան, Հայոց եղեռնապատումի գրականութիւնը, Եր., 2015, էջ 48:
- 11.- Յ. Օշական, «Համապատկեր արեւմտահայ գրականութեան», Անթիլիաս, 1982, էջ 122:



Ճանսեմ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՆ

«Մեր ցեղը չի հեզներ: Չի կրնար ատել: Իր պատմութեան մէջ ան ամենէն աւելի մեղքացած է»:

+++

[Ծնած ենք] «Երկրի մը մէջ, ուր այդքան անվրդով երագելու համար մարդիկ արծիւ ծնելու չափ խելացի չէին եղած»



Գրիգոր Խանգեան, 1915